

Հաստատված է
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի
«07» դեկտեմբերի 2023 թ. թիվ 190 նիստում
ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն
Ա. Սարգսյան



Հաշվետվություն Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի 2023թ.-ի

2023թ. հաշվետու տարում ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնում (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ) Տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի (այսուհետ՝ Բաժին) կողմից իրականացվել են հետևյալ աշխատանքներն ու միջոցառումները:

Հաշվետու տարում ձեռք են բերվել և փոխարինվել 10 հոսանքի անխափան սնուցման սարքի (UPS) մարտկոց և շահագործման է հանձնվել աշխատակազմին ըստ տեխնիկական միջոցի և աշխատանքային առաջնահերթության:

Windows 10 օպերացիոն համակարգով աշխատող աշխատանքային համակարգիչների արագագործության բարձրացման նպատակով ձեռք է բերվել 20 SSD կրիչ/կուտակիչ, որոնցից 13 հատը ավելացվել են աշխատակիցների համակարգիչներում, իսկ 7 հատը փոխարինվել են լսարանային և շարժական դյուրակիր համակարգիչներում՝ ներկայացուցչական, տեղում կամ տեսահանդիպումներում անցկացվող միջոցառումների ժամանակ կայուն ցուցադրություններ ապահովելու համար:

Բացի վերոգրյալ տեխնիկական միջոցներից ու համալրող սարքերից ձեռք է բերվել նաև 1 մինի համակարգիչ, 5 Wi-Fi երթուղիչ և այլն:

Տարվա ընթացքում եղել են չնախատեսված գնումներ և աշխատանքներ, ինչպիսիք են 2 տեսաձրող (scanner) սարք, Կենտրոնում՝ տարածքային փոփոխություններով պայմանավորված, ցանցային կապուղիների ու սարքերի ապամոնտաժում և մոնտաժում:

Շարունակվել է ավտոմատ անցագրային համակարգի աշխատանքի ապահովումը և շտկվել են ընթացիկ առաջացած խնդիրները: Նախորդ տարում Բաժինն տրամադրված

մեդիա միջոցներով հաշվետու տարում կահավորվել և բացվել է նկարահանումների տաղավարը:

Թարմացվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում տեղադրված հեռավար ուսուցման հարթակին կից տեսակոնֆերանսների՝ <https://conference.isec.am/> հարթակը, տեղադրվել է վերջին տարբերակը, նորացվել են անվտանգության և ծրագրային անհրաժեշտ փաթեթները: Թարմացվել է նաև տեսակոնֆերանսներին միանալու ուղեցույցը:

Թարմացվել է ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ-ում տեղադրված հեռավար ուսուցման հարթակի /սերվեր/ (կայք՝ <https://vle.sci.am/>) հիմքում ընկած Moodle միջավայրը ավելի նոր տարբերակով: Թարմացվել և վերակարգավորվել են համակարգի այլ ծրագրային ապահովումները ևս: Հարթակի անվտանգության և անխափան աշխատանքի համար կատարվել են անհրաժեշտ ընթացիկ սպասարկումներ՝ արխիվացվել են տվյալների բազաները, սերվերային համակարգը, կատարվել են պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլն:

Բաժնի աշխատակցի կողմից համակարգվել է հեռավար կրթության «Գործարար վարչարարություն (կառավարում՝ MBA)» մասնագիտությանը ավարտական կուրսի պաշտպանությունը:

Անկախ հեռավար հարթակում դասընթացի մշտական անցկացումից, հաշվետու տարվա կիսամյակներում՝ բոլոր կրթաձևերի մասնագիտությունների համար բացվել են համապատասխան առարկայական տիրույթներ, ըստ սահմանված պահանջների՝ առարկայի ուսուցման համար, հարթակում անհրաժեշտ նյութերի տեղադրումն ապահովելու համար:

Բաժնի աշխատակիցների կողմից իրականացվել են խորհրդատվություն և աջակցություն ինչպես ուսանողներին, դասախոսներին, այնպես էլ վարչական անձնակազմին՝ պաշտոնական էլեկտրոնային փոստից և հեռավար հարթակից օգտվելուց առաջացած հարցերում:

Իրականացվել է պաշտոնական կայքի (<https://www.isec.am>) սպասարկում, կայքի բովանդակային պարբերական թարմացումներ և ավելացումներ, ստեղծվել են նոր էջեր:

ԳԿՄԿ կայքերի մասին թվական տվյալներ

	2021	2022	2023
Կենտրոնի պաշտոնական կայքի այցելությունների քանակը	58523	56941	43059
Կենտրոնի պաշտոնական կայքում տեղադրված տարեկան նորությունների և հայտարարությունների թիվը (հայերեն, ռուսերեն, անգլերեն)	137	145	143
Կենտրոնի դոմեյնում գործող կայքերի քանակը	5	5	6
ՀՀ ԳԱԱ դոմեյնում գործող կայքերի թիվը	2	3	2

Ստորև ներկայացված են Կենտրոնի պաշտոնական կայքից օգտվողների տվյալներն ըստ առաջին 25 երկրների

	Երկիր	Դիտարկվող տիրույթ	Օգտվողներ	Նոր օգտվողներ
1	Հայաստան	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	23266	22863
2	Ամերիկայի Միացյալ Նահանգներ	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	3079	3067

3	Ռուսաստան	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	1238	1228
4	սահմանված չէ	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	1149	1149
5	Իռլանդիա	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	454	452
6	Ինդոնեզիա	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	349	309
7	Շվեդիա	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	332	332
8	Գերմանիա	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	253	249
9	Ֆրանսիա	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	213	202
10	Վրաստան	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	181	172
11	Յնդկաստան	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	173	173
12	Չինաստան	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	172	173
13	Նիդեռլանդներ	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	132	124
14	Իտալիա	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	119	114
15	Ադրբեջան	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	92	84
16	Միացյալ թագավորություն	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	90	83
17	Թուրքիա	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	78	76
18	Լեհաստան	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	76	76
19	Կանադա	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	72	72
20	Ուկրաինա	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	61	61
21	Իսպանիա	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	56	55
22	Սինգապուր	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	55	55
23	Իրան	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	49	44
24	Ղազախստան	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	45	45
25	Եգիպտոս	25 նոյ. 2022 թ. - 30 նոյ. 2023 թ.	43	41
	Ընդամենը	25 նոյ. 2022 թ.-30 նոյ. 2023 թ.	32781	32238

Բաժնի կողմից պատրաստվել է 75 ցուցապաստառ և 5 տեսանյութ, որոնք կիրառվել են Կենտրոնի պաշտոնական կայքում և սոցիալական հարթակներում:

Ըստ անհրաժեշտության կազմակերպվել են տեսականություններ գործընկեր կազմակերպությունների հետ: Բաժինն ապահովել է աշխատակիցների աշխատանքային առցանց և այլ հանդիպումների մասնակցությունը:

Բաժինն իր մասնակցությունն է ունեցել «**Մրցունակ կրթության և գիտության հիմնախնդիրները հարափոփոխ աշխարհում**» միջազգային գիտաժողովի կազմակերպման աշխատանքներին:

Թարմացվել է պահոցային համակարգի ծրագրային ապահովումը (ASUSTOR):

Կատարվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ աշխատանքային համակարգիչների պրոֆիլակտիկ ստուգումներ, առաջացած ծրագրային խնդիրների վերացում, ցանցային և համալրող սարքավորումների (տպիչներ, սկաներներ և այլն) վերանորոգում ու կարգաբերում և այլ խնդիրների լուծման ուղղությամբ տարվել աշխատանքներ: Բացվել և տրամադրվել են աշխատանքային, ուսանողական էլեկտրոնային փոստի հաշիվներ: Աշխատակիցներին ցուցաբերվել է տեխնիկական և մասնագիտական աջակցություն:

Իրականացվել են ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ լսարանային համակարգիչների ծրագրային փաթեթների, ինչպես նաև հակավիրուսային ծրագրերի թարմացումներ և ստուգումներ:

